ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1
«31» հունվարի 2022թ. թիվ ՇՄՆ-ԴՇ-22/03 պայմանագրի

ք.Երևան «12» «սեպտեմբերի» 2022թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Գուլյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պետական մարմին», մի կողմից, և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի պ/կ Կ.Մնացականյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կազմակերպություն», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի №2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» № 1407-Ն որոշումը, ինչպես նաև կողմերի միջև 2022 թվականի հունվարի 31-ին կնքված «ՇՄՆ-ԴՇ-22/03» ծածկագրով պայմանագրի 8.2 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2022 թվականի հունվարի 31-ին կնքված «ՇՄՆ-ԴՇ-22/03» ծածկագրով պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1.1. Պայմանագրի 1.1 կետում **«431 979 400 (չորս հարյուր երեսունմեկ միլիոն ինը հարյուր յոթանասունինը հազար չորս հարյուր)»** բառերը փոխարինել **«406 164 300 (չորս հարյուր վեց միլիոն հարյուր վաթսունչորս հազար երեք հարյուր)»** բառերով,

1.1.2. Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված №1-ի «Միջոցառումներ» աղյուսակում՝

ա) 1-ին կետի «պահանջվող գումարը (դրամ)» սյունյակում **«273 705 700»** թիվը փոխարինել **«289 176 200»** թվով,

բ) 4-րդ կետի «պահանջվող գումարը (դրամ)» սյունյակում **«128 081 700»** թիվը փոխարինել **«86 796 100»** թվով.

գ) 4-րդ կետի «Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները» սյունյակում **«89»** թիվը փոխարինել «64.8» թվով,

դ) «Ընդամենը» տողում **«431 979 400»** թիվը փոխարինել **«406 164 300»** թվով,

ե) «Քարտեզ-սխեմա «Սևան» ազգային պարկի «Վարդենիկ» մասնաճյուղի «Ծովինար» տեղամասում նախատեսված մաքրման աշխատանքների մակերեսը՝ 32 հա» սխեմատիկ քարտեզը փոխարինել նորով՝ համաձայն հավելվածի,

զ) «Քարտեզ-սխեմա «Սևան» ազգային պարկի «Մարտունի» մասնաճյուղի «Երանոս» տեղամասում նախատեսված մաքրման աշխատանքների մակերեսը՝ 89 հա» սխեմատիկ քարտեզը ճանաչել ուժը կորցրած:

1.1.3. Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված №2-ի «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով հաստատված արդյունքային (կատարողական) ցուցանիշների եռամսյակային (աճողական) համամասնությունները» աղյուսակում՝

ա) «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրում, հա» տողի «Տարի» սյունյակի **«89»** թիվը փոխարինել **«64.8»** թվով.

բ) կատարել լրացում՝ նոր տողով հետևյալ բովանդակությամբ.

«	Պետական գրանցման ենթակա գույքային միավորների քանակ, հատ	0	0	0	55 »

գ) «Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)» տողի՝

1) «Ինն ամիս» սյունյակի **«302 385.6»** թիվը փոխարինել **«276 570.5»** թվով,

2) «Տարի» սյունյակի **«431 979.4»** թիվը փոխարինել **«406 164.3»** թվով:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Սևան, Նաիրյան 178
ՖՆ գործառնական վարչություն	ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011007789	ՀՀ 900018002890
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 08602899
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար	«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի պ/կ
Գ.Գուլյան	**Կ.Մնացականյան**
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
«12» «սեպտեմբերի» 2022թ. կնքված
համաձայնագիր №1
№ ՇՄՆ-ԴՇ-22/03 պայմանագրի

Քարտեզ-սխեմա <<Սևան ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի <<Վարդենիկ>> մասնաճյուղի <<Ծովինար>> տեղամասում նախատեսված մաքրման աշխատանքների մակերեսը՝ 32 հա